ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ

ՔԱՂԱՔԱՑՈՒ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Սիրելի՛ հայրենակիցներ, Հայաստանի Հանրապետությունը նշում է Քաղաքացու օրը:

Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին: Յուրաքանչյուր ժողովրդավար երկրում լեգիտիմ իշխանության տերը քաղաքացին է՝ ով թելադրում է իր կամքն ազատ խոսքի և սեփական ընտրությունների միջոցով:

Քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են, իսկ պաշտպանված, իրավագիտակից և պետականամետ գաղափարախոսության կրող քաղաքացին պետության շարժիչ ուժն է:

Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է գիտակցել, որ հենց ինքն է պետության լիիրավ տերը, իր ձեռքերում է ինչպես իշխանությունը, այնպես էլ իր ուսերին է դրված այն ճիշտ նպատակին ծառայեցնելու և երկիրը շենացնելու պարտականությունը:

Սիրելի՛ քաղաքացիներ, մոտեցեք մեր պետությանը ծնողական հոգատարությամբ և որդիական հնազանդությամբ: Դարձեք մեր երկրի ներկայի ու ապագայի կերտողը: Ընկալեք ձեզ որպես այս հսկայական օրգանիզմի մի մասը և գործեք՝ հանուն նրա անխափան աշխատանքի:

Հարգանքներով՝ Սուրեն Կոստանդյան